1.«Նարինե Ծատուրյան Ղևոնդի» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 43068784) տալ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 29/38/1 հասցեում գտնվող 46 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում՝ 2023 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար (N ՈԽԾ-30-23 թույլտվությունը կցվում է):

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 06
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

06 հուլիսի 2023թ. N 411-Ա

### «ԺՈՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԱՐՏԻՆԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, հիմք ընդունելով Ժորա Մարգարյանի հայտը և վճարման անդորրագիրը՝ ***որոշում եմ.***

1.«Ժորա Մարգարյան Մարտինի» անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար 43193767) տալ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 11/43/1 հասցեում գտնվող առևտրի օբյեկտում՝ 2023 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 06
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հուլիսի 2023թ. N 412-Ա

## ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերի ու հաշվի առնելով «ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի հունիսի 20-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հատկացված 0.05 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.0098 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, շինությունները կառուցված են 1983, 1985 և 1987 թվականներին, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային

կազմակերպության տված 2022 թվականի նոյեմբերի 15-ի N Աբ-2763 արխիվային տեղեկանքը, Վլադիմիր Սարգսի Հակոբյանի լիազորած անձ Էդուարդ Սարգսի Նանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի թիվ 6 տեղամասի թիվ 334 հասցեի (կադաստրային ծածկագիր 07-051-0102-0031) անշարժ գույքին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գառնի թաղամասի 2-րդ փողոց 151:

2.Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ճանաչել Վլադիմիր Սարգսի Հակոբյանի սեփականության իրավունքը իրեն պատկանող 0.05 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0102-0031) փաստացի ավել օգտագործվող 0.0098 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3.Վլադիմիր Սարգսի Հակոբյանին պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գառնի թաղամասի 2-րդ փողոց 151 հասցեի (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0102-0031, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023CY6Z9U) 0.0598 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 197.0 քմ արտաքին (171.4 քմ ներքին) մակերեսով բնակելի տունը, 11.6 քմ արտաքին (8.2 քմ ներքին) մակերեսով ջրավազանը, 5.1 քմ մակերեսով և 11.8 քմ մակերեսով պարիսպները ճանաչել օրինական:

4. Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.0598 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 06
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

06 հուլիսի 2023թ. N 413-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 51-րդ կետերի, հիմք ընդունելով Մնացական Գագիկի Գևորգյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Մնացական Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նոռնոս գյուղում գտնվող 07-051-0002-0044 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նոռնոս 11-րդ փողոց 4/1:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 06
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 հուլիսի 2023թ. N 414-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ԱՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Հանրային ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ մասի, Աշխատանքային օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով Անի Եղիազարյանի 2023 թվականի հուլիսի 06-ի դիմումն ու 2023 թվականի հուլիսի 06-ի գրավոր համաձայնագիրը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարի օգնական Անի Սմբատի Եղիազարյանին 2023 թվականի հուլիսի 07-ից ազատել պաշտոնից և լուծել նրա հետ 2023 թվականի մարտի 28-ին կնքված N 01 աշխատանքային պայմանագիրը:

2.Համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել Անի Սմբատի Եղիազարյանի հետ վերջնահաշվարկի կատարումը՝ 6 օր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 06
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հուլիսի 2023թ. N 415-Ա

### ՄԱՆՎԵԼ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ և 51-րդ կետերի ու հաշվի առնելով «ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի դեկտեմբերի 19 -ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինքնակամ կառուցված շինությունները կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հատկացված 0.05 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.01 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, շինությունները կառուցված են 1982, 1984 և 2016 թվականներին, հիմք ընդունելով «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության տված 2021 թվականի նոյեմբերի 02-ի N ԱՔ-2066 արխիվային տեղեկանքը, Մանվել Սավալանի Ավագյանի լիազորած անձ Վահրամ Մանվելի Ավագյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Նուռնուսի այգետարածքի թիվ 14 տեղամասի թիվ 409 հողակտորին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք-1 թաղամաս 45:

2.Համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ճանաչել Մանվել Սավալանի Ավագյանի սեփականության իրավունքը իրեն պատկանող 0.05 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0125-0002) փաստացի ավել օգտագործվող 0.01 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3.Մանվել Սավալանի Ավագյանին պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք - 1 թաղամաս 45 (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0125-0002, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 20228CHFZS) 0.06 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված 12.7 քմ արտաքին (10.95 քմ ներքին) մակերեսով ամառային խոհանոցը և 7.1 քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական:

4. Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.06 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Մանվել Սավալանի Ավագյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 28200 (քսանութ հազար երկու հարյուր) դրամ՝ ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման վճար:

6.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում սույն որոշումն համարել ուժը կորցրած:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 07
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հուլիսի 2023թ. N 416-Ա

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 51-րդ կետերի, հիմք ընդունելով Մելանյա Սուրենի Սիմոնյանի լիազորած անձ Գեորգի Կիմի Իսայանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Մելանյա Սուրենի Սիմոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նուռնուս գյուղում գտնվող 07-051-0103-0001 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Վան թաղամաս 12/14:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 07
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

07 հուլիսի 2023թ. N 417-Ա

### ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի, հիմք ընդունելով Անդրանիկ Ռոբերտի Սարգսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 108 (ծածկագիր՝ 07-003-0020-1108, սեփականության վկայական N 23032023-07-0200) հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.01289 հեկտար հողամասում ավտոտեխսպասարկման կետի կառուցման նպատակով Անդրանիկ Ռոբերտի Սարգսյանին տալ շինարարության թույլտվություն՝ համաձայն հաստատված նախագծի (N 43 շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Անդրանիկ Ռոբերտի Սարգսյանին՝ համայնքապետարանի 900105202247 հաշվեհամարին վճարել 15000 (տասնհինգ հազար) դրամ՝ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 07
ք. Բյուրեղավան

Հավելված
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2023 թվականի հուլիսի 03 -ի N 399-Ա որոշման

ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1.Բյուրեղավանի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերի բաց դասական աճուրդ՝

| Հ/Հ | Հողամասի գտնվելու վայրը (հասցեն) | Հողամասի մակերեսի չափը (քմ.) | Հողամասի կադաստրային ծածկագիրը | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը | Հողամասի օտարման մեկնարկային գինը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| Լոտ 1 | Համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան 1-ին թաղամաս 72 | 87,7 | 07-003-0018-1046 | բնակավայրերի | հասարակական կառուցապատման | 700 000 |
| Լոտ 2 | Համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան 1-ին թաղամաս 73 | 122,3 | 07-003-0018-1045 | բնակավայրերի | հասարակական կառուցապատման | 1 100 000 |
| Լոտ 3 | Համայնք Բյուրեղավան, գյուղ Ջրաբեր, 4-րդ փողոց 7 հողամաս | 200 | 07-055-0206-0007 | Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների | կապի | 1 300 000 |
| Լոտ 4 | Համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 40/1 | 1989,4 | 07-003-0020-1105 | բնակավայրերի | հասարակական կառուցապատման | 5 800 000 |
| Լոտ 5 | Համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Հայրենադարձ թաղամաս 66 | 500 | 07-003-0053-0049 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2 400 000 |
| Լոտ 6 | Համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Հայրենադարձ թաղամաս 67 | 500 | 07-003-0053-0054 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2 600 000 |
| Լոտ 7 | Համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Հայրենադարձ թաղամաս 68 | 500 | 07-003-0053-0041 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2 600 000 |
| Լոտ 8 | Համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Հայրենադարձ թաղամաս 69 | 500 | 07-003-0053-0048 | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 2 400 000 |

2. Աճուրդը կկայանա 2023 թվականի օգոստոսի 04-ին ժամը 11:00-ին, Բյուրեղավանի Մշակույթի տան շենքում, (հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց):
3. Աճուրդին մասնակցել ցանկացողները ներկայացնում են հայտ, մասնակցության համար սահմանված չափով վճարի անդորրագիր, անձնագիր (նույնականացման քարտ), իրավաբանական անձանց համար՝ հիմնադիր փաստաթղթեր:
4. Մասնակցության վճարը սահմանված է 5000 (հինգ հազար) դրամ:
5. Նախավճարի չափը սահմանված է լոտի մեկնարկային գնի 50 տոկոսի չափով, որը վճարվում է աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ:
6. Աճուրդի քայլի չափը սահմանված է լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:
7. Լոտի նկատմամբ սահմանափակումներ չկան:
8. Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու և հայտեր ներկայացնելու համար դիմել Բյուրեղավանի համայնքապետարան (ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. 0222 6 52 03):
9. Լոտերն ուսումնասիրելու համար դիմել համայնքապետարան յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ընկած ժամանակահատվածում:
10. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ՝ մինչև 2023 թվականի օգոստոսի 1-ը, ժամը՝ 18:00:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
<u>ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ</u>
(ՀՀ մարզ, համայնք)

# <u>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ</u>

<u>N 43</u>          <u>7 հուլիսի 2023 թ.</u>

Տրված է կառուցապատող՝ **<u>Անդրանիկ Ռոբերտի Սարգսյան (Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 19 շենք 14 բնակարան) հեռ. 091784818,</u>**
(իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հողամասի գտնվելու վայրը)

**<u>Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 108 (ծածկագիր՝ 07-003-0020-1108) հասցեի բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.01289 հա հողամասում ավտոտեխսպասարկման կետի կառուցման, (II կատեգորիա) միջին ռիսկայնության աստիճան</u>** օբյեկտի
(օբյեկտի անվանումը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

____________ ________________ շինարարական աշխատանքների կատարման, այդ թվում՝ (նոր կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման և այլն) կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա նշված ոչ հիմնական կառույցների ________________________________________ տեղադրման համար:
(նշվում են ոչ հիմնական կառույցների անվանումները)

1. Օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են <u>«Հարշին Նախագիծ» ՍՊԸ-ի, արտոնագրեր՝ ՃԲԴ-Ա-085, ԿԵԴ-Ա2-007</u> ______________ կողմից.
(նախագծային փաստաթղթերի փուլը, նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) ստացել է (են) փորձագիտական դրական եզրակացությունը (եզրակացությունները)
(նշել փորձաքննության տեսակը)

__________________________________________________________ կողմից կամ
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) անվանումը, լիցենզիայի համարը) (նախագծային փաստաթղթերի փուլը)

նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորագիրը՝ **<u>N 330 02.06.2023թ.</u>**
(նշել նախագիծը թողարկող պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը)

3) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ շահագրգիռ մարմինների **<u>Բյուրեղավանի համայնքապետարանի</u>** ________________________________________ հետ:
(նշել մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **<u>24 ամսվա</u>** ընթացքում՝
(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

Ներառյալ ավարտական ակտի տրամադրման համար ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:
2.1. Ապահովել օբյեկտի շահագործման թույլտվության ստացումը՝
[] ավարտական ակտի տրամադրումից-------------------- ամսվա ընթացքում
[+] **ավարտական ակտի տրամադրման օրը:**

Ներառյալ ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:

3. Շինարարության վարման մատյանը բաղկացած է թերթից, կարված և դրոշմակնքված է **<u>Բյուրեղավանի համայնքապետարանի</u>** ________________________________________ կողմից:
(իրավասու մարմնի անվանումը)

4. Նախագծային փաստաթղթերը փոփոխվել են (լրացվում է N 1 հավելվածի 108-րդ կետով նախատեսված դեպքերում) ______________________________________________ կողմից
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

և սահմանված կարգով համաձայնեցվել իրավասու մարմնի ______________________________________ և այլ
(նշել իրավասու մարմնի անվանումը)

շահագրգիռ մարմինների __________________________________________________ հետ:
(նշել օրենքով սահմանված համաձայնեցնող մարմինների անվանումները)

5. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները.

3) *(լրացվում է N 1 հավելվածի 84-րդ կետով սահմանված դեպքերում)* սույն թույլտվությունը տրվել է սահմանված կարգով հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա, որին հաջորդող «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը պետք է ապահովի հաստատված փուլով ընդունված լուծումները և աշխատանքների իրականացման հաջորդականությունը
__________________________________________________________________________________

(նշվում են նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքները և այլ աշխատանքներ)

6. *(լրացվում է N 1 հավելվածի 116-րդ կետով սահմանված դեպքերում)*
Հաշվի առնելով, որ կառուցվող օբյեկտի շինարարությունը հնարավոր չէ առանց գլխավոր հատակագծի վրա ____________________________ համարների տակ նշված շենքի (շենքերի) և կամ շինության (շինությունների) ________________________________________________________________________ քանդման՝
(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց հիմնական ցուցանիշները, ընդհանուր մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

սեփականատիրոջը (օգտագործողին) __________________________________________________ տրված սույն
(նշվում է պետական գրանցման վկայականի համարը)

թույլտվությունը նաև քանդման թույլտվություն է:

Օբյեկտի քանդման աշխատանքներն իրականացնել նախագծային փաստաթղթերով ամրագրված հաջորդականությամբ:

7. Այլ պայմաններ ______________________________________________________________________:
(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

8. Կառուցապատողը շինարարական (քանդման, ապամոնտաժման) աշխատանքներն սկսելուց առնվազն 3 օր առաջ, համաձայն N 5 հավելվածի N 2-5 ձևի, տեղեկացնում է իրավասու մարմնին:

9. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________________________ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ա. Եղիազարյան

Կ. Տ.

Հեռ. 022265205